


**ԿԱՆՈՆՆԵՐ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ**  
**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Կոդ RUL16-0004-05 PUB	Խմբագրություն 03
Կազմեց	Հաստատված
Ներդրումային գործառնությունների բաժին	Վարչության 13/07/2023թ. թիվ 24 արձանագրություն
Կիրառման ոլորտ	Ներդրումային գործառնությունների բաժին
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում	Ներդրումային գործառնությունների բաժին
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	24/07/2023թ.
Ուժի կորցնելու ամսաթիվ	

	<p style="text-align: center;">Կանոններ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավորման գործունեության</p>	<p style="text-align: right;">RUL16-0004-05 PUB Խմբագրություն: 03 24/07/2023թ.</p>
---	---	--

## 1. Նպատակ

Սույն Կանոնների նպատակն է սահմանել Բանկի, որպես «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության առանձնահատկությունները և ընթացակարգերը:

## 2. Առնչվող փաստաթղթեր

- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք:
- Հայաստանի կենտրոնական բանկի ընդունած նորմատիվ իրավական ակտեր:
- «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կանոններ:
- Բանկի ներքին իրավական ակտեր:


## 3. Սահմանումներ և Հապավումներ

- **Բանկ** – «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ:
  - **Կանոններ** – «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավորման գործունեության կանոններ:
  - **Օրենք** – «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը:
  - **Դեպոզիտարիա** – «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ:
  - **Դեպոզիտարիայի կանոններ** – «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ»:
  - **Թողարկող** – անձ, որն արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում և որն իր կողմից թողարկված (տեղաբաշխված) արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարումը կամ պահառությունը հանձնել է կամ հանձնելու նպատակով դիմել է Դեպոզիտարիային:
  - **Ռեեստրի վարման պայմանագիր** – Թողարկողի և Դեպոզիտարիայի միջև Բանկի միջնորդությամբ կնքված արժեթղթերի ռեեստրի վարման պայմանագիր:
  - **Պահառության պայմանագիր** – Հաշվետիրոջ և Դեպոզիտարիայի միջև Բանկի միջնորդությամբ կնքված պահառության կամ ենթապահառության պայմանագիր:
  - **Արժեթղթերի հաշիվ** – Բանկի կողմից իր «Արժեթղթերի պահառության գործունեության կանոններ»-ի համաձայն մատուցվող ծառայությունների շրջանակներում բացված հաշիվ:
  - **Հաշվետեր** – անձ, որն ունի (որի անունով առկա է) Համակարգում բացված արժեթղթերի հաշիվ:
  - **Համակարգ** – «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգ»- արժեթղթերի հաշվառումն ապահովող և արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում փոխադարձ պարտավորությունների կատարման և այդ պարտավորությունների կատարումը երաշխավորող տեխնիկական և իրավական միջոցների ամբողջություն:
  - **Կորպորատիվ գործողություն** – Թողարկողի որոշմամբ տվյալ թողարկողի որևէ դասի (տեսակի) արժեթղթերի անվանական արժեքի փոփոխություն, փոխարկում, բաժանում, համախմբում, հետգնում, ձեռքբերում, մարում, չեղյալ համարում կամ Թողարկողի վերակազմակերպում:
  - **Հաճախորդ** – անձ, որն ունի Բանկի հետ կնքված Ռեեստրի վարման կամ Պահառության պայմանագիր կամ դիմել է Բանկին նման պայմանագիր կնքելու նպատակով:
- Կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով, դրա հիման վրա ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված նշանակությունները:

## 4. Կանոնների գործողության շրջանակ

4.1. Կանոնները կարգավորում են այն ծառայությունների մատուցման գործընթացը, որոնք Բանկը մատուցում է որպես.

- 4.1.1. Հաշվի օպերատոր,
- 4.1.2. Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ:

	<p style="text-align: center;">Կանոններ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավորման գործունեության</p>	<p style="text-align: right;">RUL16-0004-05 PUB Խմբագրություն: 03 24/07/2023թ.</p>
---	---	--


- 4.2. Որպես հաշվի օպերատոր Բանկը միջնորդավորում է Դեպոզիտարիայի կողմից մատուցվող հետևյալ ծառայությունները.
- 4.2.1. Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում,
  - 4.2.2. Արժեթղթերի պահառություն,
  - 4.2.3. Պարտատոմսերի մարման, արժեկտրոնների վճարման, բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման հետ կապված գործառնություններ,
  - 4.2.4. Թողարկողի պատվերով իր կողմից տեղաբաշխված արժեթղթերի՝ օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ սահմանված, ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում
  - 4.2.5. Թողարկողին իր կողմից տեղաբաշխված արժեթղթերով իրականացված գործառնությունների մասին ծանուցումը, որը ներառում է այդ արժեթղթերի փոխանցման, ինչպես նաև գրավի կամ այլ հիմքով այդ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:
- 4.3. Որպես կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ Բանկը միջնորդավորում է Դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայություններն այնքանով, որքանով դա հնարավոր է դարձնում իր կողմից կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների կնքման նպատակով իր կամ իր հաճախորդից ստացված հանձնարարականների կատարումը:
- 4.4. Բանկի հաճախորդ չհանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են պայմանագիր կնքել և հանձնարարականներ ներկայացնել բացառապես Բանկի Ներքին Ֆինանսական դիտարկումների մարմնի կողմից Նախնական համաձայնությունն ստանալուց հետո: Այդ նպատակով Ներքին ֆինանսական դիտարկումների բաժին է ներկայացվում հաճախորդի անձը հաստատող փաստաթղթերը, գրանցման փաստաթղթերը, միջոցների ծագման աղբյուրը հավաստող փաստաթղթեր/տեղեկություններ, անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր:
- 4.5. Կանոնները չեն տարածվում Բանկի կողմից այն պահառության ծառայությունների մատուցման վրա, որոնց շրջանակում Բանկը հանդես է գալիս որպես անվանատեր: Այդ ծառայությունների մատուցումը կարգավորվում է Բանկի [«Արժեթղթերի պահառության գործունեության կանոններ»](#)-ով:

## 5. Դեպոզիտարիայի կանոնների հետ համադրելիությունը

- 5.1. Սույն Կանոններով այլ բան սահմանված չլինելու դեպքում, Բանկը Կանոնների 4.1-ից 4.3 կետերում նշված ծառայությունները մատուցում է Դեպոզիտարիայի կանոններով սահմանված ընթացակարգերով:
- 5.2. Սույն Կանոններով սահմանված ընթացակարգերը կարող են լրացնել Դեպոզիտարիայի կանոններով սահմանված ընթացակարգերին, սակայն չեն կարող հակասել դրանց:

## 6. Թողարկողների հետ ռեեստրի վարման պայմանագրի կնքումը

- 6.1. Բանկը արժեթղթերի ռեեստրի վարման ծառայությունը միջնորդավորում է Թողարկողի և Դեպոզիտարիայի միջև կնքված Ռեեստրի վարման պայմանագրի հիման վրա:
- 6.2. Ռեեստրի վարման պայմանագիր կնքելու նպատակով Թողարկողները պետք է Բանկին ներկայացնեն Դեպոզիտարիայի կանոններով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև.
  - 6.2.1. Թողարկողի գործադիր մարմնի ղեկավարի.
    - 6.2.1.1. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթը,
    - 6.2.1.2. իրավաբանական անձի դեպքում՝ գրանցումը հավաստող փաստաթուղթը և Կանոնադրությունը կամ այլ հիմնադիր փաստաթուղթ,
  - 6.2.2. Թողարկողի այլ լիազորված անձանց.
    - 6.2.2.1. անձը հաստատող փաստաթուղթը,
    - 6.2.2.2. գրանցումը հավաստող փաստաթուղթը և կանոնադրությունը կամ այլ հիմնադիր փաստաթուղթ՝ իրավաբանական անձի դեպքում,

	<p style="text-align: center;">Կանոններ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավորման գործունեության</p>	<p style="text-align: right;">RUL16-0004-05 PUB Խմբագրություն: 03 24/07/2023թ.</p>
---	---	--

6.2.2.3. լիազորությունները հավաստող փաստաթղթերը:

6.2.3. Անհրաժեշտության դեպքում նաև այլ փաստաթղթեր:

- 6.3. Եթե Թողարկողը Բանկի հետ կնքված որևէ այլ պայմանագրի շրջանակներում արդեն իսկ Բանկին ներկայացրել է 6.2. կետում նշված որևէ փաստաթուղթ կամ տեղեկություն, որում փոփոխություն չի եղել, ապա Թողարկողը կարող է չներկայացնել այդ փաստաթուղթը կամ տեղեկությունը:
- 6.4. Բանկը պետք է 6.3 կետերում նշված փաստաթղթերը ստանալուց հետո Թողարկողի ներկայացրած և իր մոտ առկա փաստաթղթերի և տեղեկությունների համախմբման միջոցով կազմի Ռեեստրի վարման պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական փաթեթը:

## 7. Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված գործառնությունների կատարումը


- 7.1. Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված գործառնությունների կատարման նպատակով Թողարկողը պետք է Բանկին ներկայացնի Դեպոզիտարիայի կանոններով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև Թողարկողի դիմումն արժեթղթերի տեխաբաշխմամբ պայմանավորված գործառնությունների իրականացման մասին:
- 7.2. Եթե տեղաբաշխման ընթացքում արժեթղթեր ձեռքբերած անձը չունի արժեթղթերի հաշիվ, ապա տեղաբաշխման գործառնության գրանցման համար Բանկը պետք է պահանջի, որպեսզի ներկայացվեն նաև այդ անձի համար Արժեթղթերի հաշիվ բացելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

## 8. Կորպորատիվ գործողությունների հետ կապված գործառնությունների կատարումը

- 8.1. Կորպորատիվ գործողությունների հետ կապված գործառնությունների կատարման նպատակով Թողարկողը պետք է Բանկին ներկայացնեն Դեպոզիտարիայի կանոններով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև.
- 8.1.1. Թողարկողի դիմումը կորպորատիվ գործողության հետ կապված գործառնությունների կատարման մասին,
- 8.1.2. Կորպորատիվ գործողության հետ կապված գործառնությունների կատարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր (արժեթղթերի փոխարկման կարգ, ձեռքբերման կամ հետգնման արդյունքները հավաստող փաստաթղթեր և այլն),

## 9. Արժեթղթերի հաշվի բացումը

- 9.1. Արժեթղթերի հաշիվը բացվում է Բանկի և Հաճախորդի միջև արժեթղթերի Պահառության պայմանագրի կնքմամբ:
- 9.2. Ֆիզիկական անձի համար Արժեթղթերի հաշվի բացումն իրականացվում է Դեպոզիտարիայի կանոններով սահմանված փաստաթղթերի, ինչպես նաև հետևյալ փաստաթղթերի հիման վրա.
- 9.2.1. Հաշվետիրոջ լիազորված իրավաբանական անձի.
- 9.2.2. գրանցումը հավաստող փաստաթուղթ,
- 9.2.3. կանոնադրություն կամ այլ հիմնադիր փաստաթուղթ,
- 9.3. Իրավաբանական անձի համար Արժեթղթերի հաշվի բացումն իրականացվում է Դեպոզիտարիայի կանոններով սահմանված փաստաթղթերի, ինչպես նաև հետևյալ փաստաթղթերի հիման վրա.
- 9.3.1. Հաշվետիրոջ կանոնադրություն կամ այլ հիմնադիր փաստաթուղթ,
- 9.3.2. Հաշվետիրոջ լիազորված իրավաբանական անձի.
- 9.3.3. գրանցումը հավաստող փաստաթուղթ,
- 9.3.4. կանոնադրություն կամ այլ հիմնադիր փաստաթուղթ,
- 9.4. Որևէ պետության (այդ թվում Հայաստանի Հանրապետության) կամ համայնքի (այդ թվում Հայաստանի Հանրապետության համայնքների) համար արժեթղթերի հաշվի բացումն իրականացվում է հետևյալ փաստաթղթերի հիման վրա.
- 9.4.1. Հաշվի բացման հանձնարարական,

	<p style="text-align: center;">Կանոններ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավորման գործունեության</p>	<p style="text-align: right;">RUL16-0004-05 PUB Խմբագրություն: 03 24/07/2023թ.</p>
---	---	--

- 9.4.2. պետության կամ համայնքի անունից հանդես եկող իրավասու մարմնի նշանակման փաստը հավաստող փաստաթուղթ (բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինը նշանակված է օրենքով),
- 9.4.3. պետության կամ համայնքի անունից հանդես եկող իրավասու մարմնի լիազորված ներկայացուցիչների (այդ թվում՝ այն անձի, ով օրենքի ուժով իրավունք ունի գործել տվյալ մարմնի անունից առանց լիազորագրի) լիազորությունները հավաստող փաստաթղթեր (տվյալ պաշտոնում նշանակվելու կամ ընտրվելու մասին որոշում, լիազորագիր կամ այլ),
- 9.4.4. պետության կամ համայնքի անունից հանդես եկող իրավասու մարմնի լիազորված ներկայացուցիչների.
- 9.4.4.1. անձը հաստատող փաստաթուղթ՝ ֆիզիկական անձի դեպքում, գրանցումը հավաստող փաստաթուղթ՝ իրավաբանական անձի դեպքում,
- 9.4.4.2. կանոնադրություն կամ այլ հիմնադիր փաստաթուղթ՝ իրավաբանական անձի դեպքում,
- 9.5. Եթե Արժեթղթերի հաշվի բացման համար դիմողը որևէ պետություն է (այդ թվում Հայաստանի Հանրապետությունը) կամ համայնք (այդ թվում Հայաստանի Հանրապետության համայնքները), ապա հաշվի բացման հանձնարարականը ներառում է հետևյալ տեղեկությունները.
- 9.5.1. անվանումը (համապատասխան պետություն կամ համայնք),
- 9.5.2. պետության կամ համայնքի անունից հանդես եկող իրավասու մարմնի անվանումը,
- 9.5.3. պետության կամ համայնքի անունից հանդես եկող իրավասու մարմնի գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն),
- 9.5.4. բանկային հաշվի համարը և սպասարկող բանկի վավերապայմանները,
- 9.5.5. պետության կամ համայնքի անունից հանդես եկող իրավասու մարմնի լիազորված ֆիզիկական անձի (այդ թվում՝ այն անձի, ով օրենքի ուժով իրավունք ունի գործել տվյալ մարմնի անունից առանց լիազորագրի) վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.
- 9.5.5.1. անունը, ազգանունը,
- 9.5.5.2. ծննդյան ամսաթիվը՝ թվերով (օր/ամիս/տարի),
- 9.5.5.3. քաղաքացիությունը՝ երկրի անվանմամբ,
- 9.5.5.4. անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան, տրման և վավերականության ժամկետի ավարտի ամսաթիվը,
- 9.5.5.5. հանրային ծառայության (կամ սոցիալական քարտի) համարանիշը կամ, հանրային ծառայության համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի համարը,
- 9.5.5.6. բնակության վայրը (մշտական և բնակության՝ տվյալ պահին),
- 9.5.5.7. կապի միջոցները (մասնավորապես, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն),
- 9.5.5.8. լիազորությունների շրջանակը և ժամկետը:
- 9.5.6. պետության կամ համայնքի անունից հանդես եկող իրավասու մարմնի լիազորված իրավաբանական անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.
- 9.5.6.1. անվանումը (հայերեն, իսկ առկայության դեպքում նաև անգլերեն և ռուսերեն),
- 9.5.6.2. գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն),
- 9.5.6.3. ՀՎՀՀ-ն
- 9.5.6.4. պետական գրանցում չնորհած երկիրը, պետական գրանցման համարը և ամսաթիվը,
- 9.5.6.5. ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի համարը և տրման ամսաթիվը,
- 9.5.6.6. լիազորությունների շրջանակը և ժամկետը, այն անձանց անունը, ազգանունը, անձնագրի սերիան, համարը, պաշտոնը և հանրային ծառայության (կամ սոցիալական քարտի) համարանիշը կամ, հանրային ծառայության համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի համարը, որոնք լիազորված են գործելու տվյալ իրավաբանական անձի անունից,


- 9.6. Հաշվետիրոջ լիազորված իրավաբանական անձի անունից հանդես գալու լիազորություն ունեցող ֆիզիկական անձը Բանկի կողմից դիտարկվում է որպես հաշվետիրոջ լիազորված ֆիզիկական անձ և նրա նկատմամբ կիրառվում են լիազորված ֆիզիկական անձանց համար սահմանված պահանջները:
- 9.7. Եթե Հաշվետերն ունի մեկից ավելի լիազորված ֆիզիկական անձինք (ներառյալ նաև առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձը), ապա հաշվի բացման համար բավարար է նրանցից մեկի անձը հաստատող փաստաթղթի առկայությունը:
- 9.8. Եթե Հաշվետերը Բանկի հետ կնքված որևէ այլ պայմանագրի շրջանակներում արդեն իսկ Բանկին ներկայացրել է 9.2.-9.5. կետերում նշված որևէ փաստաթուղթ կամ տեղեկություն, որում փոփոխություն չի եղել, ապա Հաշվետերը կարող է չներկայացնել այդ փաստաթուղթը կամ տեղեկությունը:
- 9.9. Բանկը պետք է 9.2.-9.5. կետերում նշված փաստաթղթերը ստանալուց հետո հաճախորդի ներկայացրած և իր մոտ առկա փաստաթղթերի և տեղեկությունների համախմբման միջոցով կազմի Արժեթղթերի հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական փաթեթը:
- 9.10. Բանկն իր հայեցողությամբ կարող է յուրաքանչյուր եռամսյակի ավարտին փակել բոլոր այն զրոյական հաշիվները, որոնցով մեկ ամիս և ավել ժամկետում գործառնություններ չեն իրականացվել:

**10. Հաշվետիրոջ նույնականացման կարգը**

- 10.1. Հաշվետիրոջ նույնականացման անհրաժեշտությունն առաջանում է հաշվի բացման և հաշվի տեղեկությունների փոփոխության բոլոր այն դեպքերում, երբ Հաճախորդի ներկայացրած տվյալների և համակարգում առկա տվյալների համադրման արդյունքում հնարավոր չի լինում միանշանակ հավաստիանալ, որ Հաճախորդը և համակարգում գրանցված Հաշվետերը նույն անձն են:
- 10.2. Եթե Հաճախորդը համակարգում առկա որևէ Թողարկողի կողմից թողարկված որևէ արժեթղթի սեփականատեր է, ապա նույնականացումը կարող է իրականացվել նաև Թողարկողի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:
- 10.3. Եթե նույնականացման անհրաժեշտությունն առաջացել է անձը հաստատող փաստաթղթի տվյալների անհամապատասխանության հետևանքով, ապա նույնականացումը կարող է իրականացվել նաև անձը հաստատող փաստաթուղթը տրամադրող մարմնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:
- 10.4. Եթե նույնականացման անհրաժեշտությունն առաջացել է անձի անունի կամ ազգանվան անհամապատասխանության հետևանքով, ապա նույնականացումը կարող է իրականացվել նաև անձը հաստատող փաստաթուղթը տրամադրող մարմնի կողմից տրված տեղեկանքի կամ համապատասխան փոփոխության մասին վկայող փաստաթղթի հիման վրա:
- 10.5. Իրավաբանական անձ Հաշվետերերի դեպքում նույնականացումը կարող է իրականացվել նաև իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

**11. Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնությունների կատարումը**

- 11.1. Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնությունների կատարման համար Բանկը բացի Դեպոզիտարիայի կանոններով սահմանված փաստաթղթերից կարող է պահանջել նաև արժեթղթերի փոխանցման համար հիմք հանդիսացող փաստաթուղթը:
- 11.2. Արժեթղթերի փոխանցման հանձնարարականները, բացի Դեպոզիտարիայի կանոններով սահմանված տեղեկություններից պետք է ներառեն նաև.
  - 11.2.1. արժեթղթերի փոխանցման հիմքը (առուվաճառք, նվիրատվություն, ժառանգություն կամ այլ),
  - 11.2.2. արժեթղթերի փոխանցման գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթի վավերապայմանները (առկայության դեպքում),

	<p style="text-align: center;">Կանոններ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավորման գործունեության</p>	<p style="text-align: right;">RUL16-0004-05 PUB Խմբագրություն: 03 24/07/2023թ.</p>
---	---	--


- 11.3. Արժեթղթերի փոխանցման հանձնարարականը պետք է ստորագրվի արժեթղթերը փոխանցողի կողմից, բացառությամբ արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցման դեպքի, երբ փոխանցման հանձնարարականը կարող է ստորագրվել գրավառուի կողմից:
- 11.4. Ժառանգության արդյունքում արժեթղթերի փոխանցումը իրականացվում է ժառանգության իրավունքը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման դեպքում:
- 11.5. Բանկն իրավունք ունի մերժել արժեթղթերի փոխանցման հանձնարարականի կատարումը, եթե արժեթղթերի հաշվում առկա չեն փոխանցման հանձնարարականում նշված անհրաժեշտ քանակի արժեթղթեր, ինչպես նաև սույն կանոնների գլուխ 16-ում սահմանված դեպքերում:
- 11.6. Արժեթղթերի փոխանցումը կարող է մերժվել նաև համապատասխան իրավական ակտերով սահմանված դեպքերում:

## 12. Արժեթղթերի գրավադրմամբ պայմանավորված գործառնությունների կատարումը

- 12.1. Այն դեպքում, երբ Բանկի Հաճախորդ է հանդիսանում արժեթղթերի գրավատուն, վերջինս արժեթղթերի գրավադրում իրականացնելու համար պետք է Բանկին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.
  - 12.1.1. Արժեթղթերի գրավադրման հանձնարարական, որը պետք է ներառի Դեպոզիտարիայի կանոններով սահմանված տեղեկությունները,
  - 12.1.2. Արժեթղթերի գրավադրման համար հիմք հանդիսացող փաստաթուղթը,
  - 12.1.3. Անհրաժեշտության դեպքում նաև այլ փաստաթղթեր:
- 12.2. Բանկն իրավունք ունի մերժել արժեթղթերի գրավադրման կատարումը, եթե Գրավատուի արժեթղթերի հաշվում առկա չեն գրավադրման հանձնարարականում նշված անհրաժեշտ քանակի արժեթղթեր, ինչպես նաև սույն կանոնների գլուխ 16-ում սահմանված դեպքերում:

## 13. Բանկի կողմից փաստաթղթերի ստացումը

- 13.1. Սույն կանոններով նախատեսված գործառնությունների իրականացման համար պահանջվող փաստաթղթերը Բանկին կարող են փոխանցվել.
  - 13.1.1. Առձեռն,
  - 13.1.2. Փոստով,
  - 13.1.3. Էլեկտրոնային փոստով կամ ՍԻ ԲԻ ԷՅ Նեթ ցանցով (Էլեկտրոնային իրավասու հասցեի կիրառմամբ):
- 13.2. Հանձնարարական, հարցում կամ Կանոններով սահմանված այլ փաստաթղթեր ստանալիս Բանկը պարտավոր է.
  - 13.2.1. պարզել փաստաթղթերը ներկայացնողի ինքնությունը՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա (առձեռն ներկայացվող փաստաթղթի դեպքում),
  - 13.2.2. ստուգել փաստաթղթերը ներկայացնող անձի լիազորությունները,
  - 13.2.3. Հաճախորդի կամ նրա լիազորված ներկայացուցչի ստորագրությունը համեմատել Բանկում առկա ստորագրության նմուշի հետ (թղթային ձևով ներկայացվող փաստաթղթի դեպքում):
- 13.3. Լիազորված ներկայացուցչի լիազորությունները հավաստվում են հետևյալ փաստաթղթերից որևէ մեկով.
  - 13.3.1. Ֆիզիկական անձի լիազորված ներկայացուցչի դեպքում.
    - 13.3.1.1. լիազորված ներկայացուցչի անունով տրված լիազորագրով,
    - 13.3.1.2. անձնագրում ծնողների (որդեգրողների) մասին առկա գրառումներով, ծննդյան վկայականով և ծնողների (որդեգրողների) անձնագրով, խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու մասին փաստաթղթով՝ անչափահասների համար,
    - 13.3.1.3. դատարանով անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին փաստաթղթով,
    - 13.3.1.4. դատարանով սահմանափակ գործունակ ճանաչված անձի նկատմամբ հոգաբարձու նշանակելու մասին փաստաթղթով,
    - 13.3.1.5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթով,

	<p style="text-align: center;">Կանոններ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավորման գործունեության</p>	<p style="text-align: right;">RUL16-0004-05 PUB Խմբագրություն: 03 24/07/2023թ.</p>
---	---	--

- 13.3.2. իրավաբանական անձի լիազորված ներկայացուցչի դեպքում.
- 13.3.2.1. իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթով սահմանված համապատասխան լիազորություններ ունեցող պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակումը հավաստող փաստաթղթով՝ տրված այդ պաշտոնատար անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից (բացառությամբ 13.5. կետում նշված դեպքի),
- 13.3.2.2. իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրով:
- 13.4. Դեպոզիտարիայի կանոններով սահմանված և Բանկի միջոցով կատարվող գործառնությունների կատարման համար տրված լիազորագիրը պետք է լինի նոտարական կարգով վավերացված, բացառությամբ հետևյալ դեպքերի.
- 13.4.1. Լիազորագիրը տրվել է Բանկի իրավասու աշխատակցի ներկայությամբ,
- 13.4.2. Բանկը ստացել է լիազորողի գրավոր կամ բանավոր հավաստագրումն այն մասին, որ լիազորագիրը տրված է իր կողմից:
- 13.5. Այն դեպքում, երբ իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթով սահմանված համապատասխան լիազորություններ ունեցող պաշտոնատար անձանց պաշտոնում նշանակված անձանց գրանցման գործընթացը 5 աշխատանքային օրից երկար է տևում և Բանկին ներկայացվել է պատշաճ հիմնավորում այդ գործընթացը սկսված լինելու մասին, այդ պաշտոնատար անձանց լիազորությունները մինչև վերոնշյալ գրանցումը կարող են հավաստվել այդ պաշտոնատար անձանց համապատասխան պաշտոնում նշանակելու մասին իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումով:
- 13.6. Բոլոր այն դեպքերում, երբ Բանկին ներկայացվում են պահանջվող փաստաթղթերի պատճենները, դրանք պետք է վավերացված լինեն ներկայացնող անձի կամ Հաճախորդի ստորագրությամբ, ինչպես նաև պետք է բովանդակեն վավերացման տարին, ամիսը և ամսաթիվը:


#### 14. Ծառայությունների մատուցման դիմաց վճարումը

- 14.1. Կանոնների համաձայն մատուցվող ծառայությունների սակագները և վճարման պայմանները սահմանվում են Բանկի Վարչության կողմից և ուժի մեջ մտնում Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով:
- 14.2. Բանկը ծառայությունների մատուցման հետ կապված վճարներ չի գանձում Բանկի մեղքով թույլ տրված սխալների ուղղման համար:
- 14.3. Բանկի Վարչության որոշմամբ՝ մարքեթինգային նպատակներից ելնելով, կարող են կիրառվել ծառայությունները զեղչված գներով կամ անվճար մատուցելու ակցիաներ:
- 14.4. Բանկն իրավունք ունի կասեցնել սույն կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումն իր միջնորդությամբ ռեեստրի վարման պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող Թողարկողներին, եթե վերջիններս ունեն այդ ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավել ժամկետանց պարտավորություն:
- 14.5. Բանկն իրավունք ունի կասեցնել սույն կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումն իր միջնորդությամբ արժեթղթերի պահառության պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող Հաշվետերերին, եթե վերջիններս ունեն այդ ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավել ժամկետանց պարտավորություն:
- 14.6. Բանկն իրավունք ունի վերսկսել Թողարկողին և հաշվետիրոջը 14.4 և 14.5 կետերով սահմանված դեպքերում կասեցված ծառայությունների մատուցումը Դեպոզիտարիայի սակագների մասին կանոններով սահմանված դեպքերում և կարգով:

#### 15. Ռեեստրում գործառնությունների կատարման մերժումը

- 15.1. Բանկն իրավունք ունի մերժել Թողարկողի հետ ռեեստրի վարման պայմանագրի կնքումը, Արժեթղթերի հաշվի բացումը կամ ռեեստրում որևէ այլ գործառնության կատարումը ստորև նշված դեպքերում.



	<p style="text-align: center;">Կանոններ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավորման գործունեության</p>	<p style="text-align: right;">RUL16-0004-05 PUB Խմբագրություն: 03 24/07/2023թ.</p>
---	---	--

- 15.1.1. Գործառնության կատարման համար ներկայացված փաստաթղթերը ստորագրվել են ոչ իրավասու անձի կողմից,
- 15.1.2. Գործառնությունների կատարման համար ներկայացված փաստաթղթերի փաթեթը ամբողջական չէ,
- 15.1.3. Գործառնությունների կատարման համար ներկայացված փաստաթղթերում առկա են թերություններ, ակնհայտ սխալներ կամ անհամապատասխանություններ,
- 15.1.4. Գործառնությունների կատարման համար ներկայացված փաստաթղթերում առկա են օրենքի հետ հակասություններ,
- 15.1.5. Բանկը չի ստացել իր ծառայության վճարը կամ այդ վճարի ստացման երաշխիքներ,
- 15.1.6. Սույն կանոններով սահմանված այլ դեպքերում:
- 15.2. Բանկն իրավունք ունի մերժել ռեեստրում գործառնությունների կատարումը անկախ այդ գործառնության հետ կապված Հաճախորդի կանոնադրության փոփոխության (կամ նոր խմբագրությամբ կանոնադրության) պետական գրանցում ստացած լինելու հանգամանքից:
- 15.3. Ռեեստրում համապատասխան գործառնության կատարումը մերժելու դեպքում մերժման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Բանկն այդ մասին պետք է տեղեկացնի գործառնության կատարման համար դիմած անձին:

**16. Եզրափակիչ դրույթներ**

- 16.1. Կանոններն ուժի մեջ են մտնում Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:
- 16.2. Կանոնների փոփոխությունները և լրացումները հաստատվում են Բանկի Վարչության կողմից և ուժի մեջ են մտնում Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, եթե դրանք հաստատելու մասին որոշմամբ այլ՝ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:
- 16.3. Բանկը պետք է տեղյակ պահի իր Հաճախորդներին սույն Կանոններում կատարված փոփոխությունների մասին՝ դրանց ուժի մեջ մտնելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ դրանք տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում: